ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2025 թվականի N 253 - Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 10.1-ին կետը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 4-րդ մասը, 25-րդ հոդվածի 2-րդ մասը և Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և 605-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված, պետական սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Խ. Կեչառեցու փողոց 1 հասցեում գտնվող և «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքը հետ վերցնել կազմակերպությունից:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Խ. Կեչառեցու փողոց 1 հասցեում գտնվող գույքի կազմից առանձնացված և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Խ. Կեչառեցու փողոց 1 հասցեով, որպես առանձին գույքային միավոր գրանցված, 2024 թվականի մարտի 13-ի դրությամբ 750 839 665,32 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 3,680.79 քառ. մետր մակերեսով շենք-շինությունները, ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 2.94152 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 09012024-07-0052 վկայական, այսուհետ՝ գույք 1) նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Ծաղկաձոր համայնքին՝ վարչական շենք, թատրոնի շենք, ավտոկայանատեղի և քաղաքային զբոսայգի կառուցելու նպատակով:

3. Ընդունել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր ք., Օրբելի Եղբայրների փողոց 9 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող, 2024 թվականի մարտի 13-ի դրությամբ 58 183 449,00 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 339.66 քառ. մետր մակերեսով վարչական շենքի և դրա սպասարկման և օգտագործման համար հատկացված 0.061 հեկտար մակերեսով հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 07082018-07-0054, այսուհետ՝ գույք 2) նվիրատվությունը Հայաստանի Հանրապետությանը և ամրացնել կոմիտեին՝ պայմանով, որ Ծաղկաձոր համայնքը կշարունակի իր գործունեությունը գույք 2-ում մինչև գույք 1-ում Ծաղկաձոր համայնքի վարչական շենքի, թատրոնի շենքի, ավտոկայանատեղիի և քաղաքային զբոսայգու կառուցման ավարտը:

4. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել 06.11.2017 թ. կազմակերպության հետ կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման թիվ 165/0017 պայմանագրի լուծման գործընթացը՝ սահմանելով, որ

համաձայնագրի նոտարական վավերացման և դրանից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվելու են կազմակերպության միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում Ծաղկաձոր համայնքի ղեկավարի հետ կնքել սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերից բխող նվիրաբերության և նվիրատվության պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ՝

ա. պայմանագրի կնքման և դրանից բխող գույք 1-ի ու գույք 2-ի իրավունքի պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման Ծաղկաձոր համայնքի միջոցների հաշվին,

բ. գույք 1-ում Ծաղկաձոր համայնքի վարչական շենքի կառուցումը կիրականացվի մինչև 2029 թվականի ավարտը, որի նպատակով Ծաղկաձոր համայնքի կողմից կներդրվի 1 000 000 000 դրամ՝ յուրաքանչյուր տարի 200 000 000 դրամ հավասարաչափ,

գ. գույք 1-ի և գույք 2-ի հանձնման-ընդունման աշխատանքները կիրականացվեն պայմանագրի կնքումից հետո մեկամսյա ժամկետում,

դ. գույք 2-ը Ծաղկաձոր համայնքի կողմից կազատվի՝ սույն ենթակետի «բ» պարբերությամբ նշված աշխատանքների ավարտից հետո՝ երկամսյա ժամկետում,

ե. նվիրաբերության պայմանի խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության պահանջով նվիրաբերությունը կհամարվի վերացված, և նվիրաբերություն ստացողը պարտավոր է Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել նվիրաբերված գույքը՝ դրա վրա կատարված անբաժանելի բարելավումների հետ միասին, որոնք փոխհատուցման ենթակա չեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ